ԲԱԺԻՆ 4. ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ

ՀՅԴ 330.1 DOI: 10.53068/25792997-2025.2.15-328

«ՍՊՈՐՏԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ԵԶՐՈՒՅԹԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Ջ.Ա. Թադևոսյան,
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Սպորտի տնտեսագիտություն, եզրույթաբանական շփոթություններ, միջդիսցիպլինար գիտակարգ, միկրոտնտեսագիտություն, մակրոտնտեսագիտություն, բեհավիորիստական տնտեսագիտություն, մեծ տվյալներ, թվային տնտեսություն:

Հետազոտության արդիականություն: Ժամանակակից գլոբալ տնտեսությունում սպորտի դերի աճը պայմանավորում է սպորտի տնտեսագիտության ուսումնասիրության կարևորությունը: Չնայած եզրույթաբանական երկիմաստություններին, տնտեսական սկզբունքների և վերլուծական գործիքների կիրառումը անհրաժեշտ է ռեսուրսների բաշխման, որոշումների կայացման և շուկաների ու հանրային քաղաքականության ազդեցության ըմբռնման համար: Ուստի, ոլորտի համակարգված և ակադեմիական սահմանումը նախապայման է տնտեսագիտական մտքի զարգացման գործում:

Հետազոտության նպատակն է՝ մասնագիտական գրականության համակողմանի վերլուծության հիման վրա գիտատեսական հիմնավորումներ ներկայացնել այն հիպոթեզի հիմնավորման համար, որ «Սպորտի տնտեսագիտությունը» տնտեսագիտության ինքնուրույն ենթաճյուղ է և ունի իր ուրույն դիրքավորումը ժամանակակից գիտակարգային համակարգում:

Հետազոտության խնդիրները, որոնք բխում են նպատակից, հետևյալն են.

- Վերլուծել և պարզաբանել «Սպորտի տնտեսագիտություն» եզրույթի մեկնաբանման հետ կապված եզրույթաբանական շփոթությունները և իմաստային անորոշությունները:
- Առաջարկել նոր սահմանում:
- Ձևակերպել հետագա զարգացման ուղղությունները:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտությունն

իրականացվել է համակարգային և համեմատական վերլուծության մեթոդներով: Ուսումնասիրվել է մասնագիտական գրականությունը, գնահատվել է ոլորտի դերը համաշխարհային տնտեսությունում: Տեղեկատվության տեսական վերլուծության և համադրման միջոցով մեկնաբանվել են սպորտի տնտեսագիտության՝ որպես ենթաճյուղի վերաբերյալ հայտնի մոտեցումները:Հետազոտության կազմակերպումը ներառել է տվյալների հավաքագրման, վերլուծության, մեկնաբանման և եզրակացությունների ձևակերպման փուլեր՝ սթ ապրիլի 1-ից մինչև օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Ժամանակակից տնտեսագիտկան գրականության ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում բացահայտել «Սպորտի տնտեսագիտություն» եզրույթի շուրջ առկա եզրույթաբանական շփոթությունները, որոնք պայմանավորված են մի շարք գործոններով, մասնավորապես.

➢ «Սպորտի տնտեսագիտության» միջդիսցիպլինար բնույթով (տարբեր ոլորտների համակցում):

➢ «Սպորտի տնտեսագիտություն»–ը համեմատաբար նոր և արագ զարգացող ակադեմիական ոլորտ է: Ոլորտի դինամիկ զարգացումը հաճախ հանգեցնում է նոր տեսությունների և մոդելների առաջացման, ինչը կարող է ժամանակավորապես ստեղծել եզրույթի մեկնաբանման անհամաձայնություններ:

➢ «Սպորտի տնտեսագիտություն»–ն ունի գործնական կիրառությունների լայն շրջանակ:

Մասնագիտական գրականության մեջ տնտեսագետ Վլադիմիր Անդրեֆը [4]առաջիններից էր, որը մատնանշեց «économie du sport» արտահայտության տարընկալումները՝ առաջարկելով հստակ տարբերակել երկու մեկնաբանություն: Նա նշում է, որ սպորտի տնտեսագիտությունը կարելի է հասկանալ երկու իմաստով. (ա) որպես **սպորտի տնտեսություն**, այսինքն՝ իրական տնտեսական ոլորտ, որը ներառում է արտադրությունը, զբաղվածությունը, հանրային ֆինանսավորումը և առևտրային փոխանակումները, և (բ) որպես **սպորտի տնտեսագիտություն**, այսինքն՝ տնտեսագիտության ակադեմիական ենթաճյուղ, որը կիրառում է տնտեսական վերլուծության տեսությունները և մեթոդները սպորտի նկատմամբ:

Ֆրանսերենում, ինչպես նաև հայերենում այս երկակիությունը հաճախ խառնվում է, մինչդեռ անգլերեն գիտական գրականության մեջ տարբերակումն ավելի հստակ է: Այս առումով Ռոջեր Դ. Բլեյրը սահմանում է. «Սպոր-

տի տնտեսագիտությունը տնտեսագիտական տեսության և էկոնոմետրիկ մեթոդների կիրառումն է սպորտային ոլորտի վերլուծության համար» [5] :

Արձանագրենք, որ Վ. Անդրեֆֆը [4] տալիս է ոլորտի **մեթոդաբանական-տրամաբանական քարտեզը** և սոցիալական օգտակարության հիմնավորումը՝ հատկապես եվրոպական դիտակետից, ընդգծելով եզրույթի հասարակագիտական արժեքը և միջդիսցիպլինար երկխոսությունը (սոցիոլոգիա, կառավարում), մինչդեռ Ռ.Բլեյրը [5] ներկայացնում է **ամերիկյան մեյնսթրիմ**՝ նպատակադրելով կիրառական – կրթական մոտեցումը՝ այն է, թե ինչպե՞ս կիրառել տնտեսագիտական գործիքակազմը սպորտի շուկաների կոնկրետ խնդիրների ուսումնասիրության ժամանակ(գնագոյացում, հեռարձակում, հակամենաշնորհային քաղաքականություն, աշխատաշուկա և այլն): Այս սահմանազատումը թույլ է տալիս ձևակերպել ավելի ճշգրիտ հետազոտական հարցեր և ընտրել համապատասխան մեթոդաբանություն:

Այսպիսով՝ տնտեսական հետազոտությունների յուրահատուկ գլոբալացման ներկա պայմաններում «Սպորտի տնտեսագիտություն»-ը (**Sports economics)՝** տնտեսական գիտության ինքնուրույն և առանձնահատուկ ենթաճյուղ է, որը կիրառում է միկրո- և մակրոտնտեսական գործիքակազմը՝ սպորտային շուկաների, կազմակերպությունների և քաղաքականությունների էմպիրիկ ու տեսական ուսումնասիրության համար:

Այս մոտեցումը գիտականորեն վերլուծում է.

Միկրոտնտեսական մակարդակում.

- Մարզիկների աշխատանքային շուկան և վարձատրության կառուցակարգերը
- Ակումբների կառավարման տնտեսական մոդելները
- Փոխանցումների շուկայի գնային մեխանիզմները
- Դիտորդների սպառողական վարքը

Մակրոտնտեսական մակարդակում.

- Սպորտի ազդեցությունը ՀՆԱ-ի վրա
- Ազգային տնտեսության մեջ սպորտի բաժնեմասը
- Մեծ մարզական միջոցառումների տնտեսական ազդեցությունը
- Սպորտային ենթակառուցվածքների ներդրումային արդյունավետությունը

Սպորտի տնտեսագիտության մեկնաբանման տարընկալումները նորովի են դրսևորվում նաև տնտեսագիտական մտքի զարգացման ժամանա-

կակից պայմաններում: Ժամանակակից մասնագիտական գրականության մեջ Լիդսը, վոն Ալմենը և Մաթեսոնը նշում[] են, որ սպորտը տալիս է միկրոտնտեսագիտության գրեթե բոլոր բաժիններից բխող օրինակների լայն դաշտ, ինչը թույլ է տալիս սպորտի տնտեսագիտությունն ուսումնասիրել հետաքրքիր ու կենդանի համատեքստում: Նրանք 7-րդ, թարմացված (2022)[11] հրատարակության կառուցվածքով ոլորտը ներկայացվում են հինգ մասով և կենտրոնանում երեք հիմնական ուղղությունների վրա՝ **արդյունաբերական կազմակերպություն**, **հանրային տնտեսագիտություն** և **աշխատանքի տնտեսագիտություն**:

Մեկ այլ հեղինակ Ռոդնի Ֆորթը[8] սպորտային տնտեսագիտությունը սահմանում է որպես «տնտեսական տեսության կիրառություն սպորտային բիզնեսի վրա», որն առավելապես վերաբերում է մասնագիտական թիմային սպորտին և ցույց է տալիս, թե ինչպե՞ս են առաջարկն ու պահանջարկը միանում շուկայական մակարդակում: Հեղինակն անդրադառնում է նաև սպորտային բիզնեսին, հատկապես սպորտային շուկայի արդյունքներին, տաղանդների շուկային, աշխատանքային հարաբերություններին, սպորտի ոլորտում կառավարության դերին:

Արդյունքի անորոշության վարկածը (*Uncertainty of Outcome Hypothesis*, UOH) շարունակում է մնալ սպորտային պահանջարկի էմպիրիկ մոդելավորման հիմնական տարրերից մեկը [10,13]: Վերջին տարիների վերարժևորումները ցույց են տալիս, որ մրցակցության հավասարությունը (կամ կանխատեսելիության պակասը) շարունակում է դիտման, մասնակցության և սպառման կարևոր խթան լինել, սակայն ազդեցության ուժը կախված է խաղի որակից, թիմերի «աստղայնությունից» և շուկայի առանձնահատկություններից: 2023 թ. NBA-ի վերաբերյալ իրականացված տեսական-էմպիրիկ ուսումնասիրությունները փաստում են, որ UOH-ի ազդեցությունը ճշգրիտ գնահատելու համար անհրաժեշտ է ներառել նաև «կանխատեսվող խաղի որակը» և թիմային որակը՝ խուսափելու համար սխալ եզրակացություններից [13]:

Մեթոդական նոր միտում է «խաղի ընթացքում» (*within-game*) անորոշության դինամիկ չափումը՝ վայրկյանային կամ քառորդային կտրվածքով գնահատելով, թե հաշվի տատանումներն ու հավասարության պահերը ինչպես են ազդում հեռուստատեսային և սթրիմինգային (օր.՝ YouTube Live, Twitch, Facebook Live, Amazon Prime Video) լսարանի վրա: Վերջին տարիների NBA-ի վերաբերյալ իրականացված էմպիրիկ

ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խաղի ընթացքում աճող անորոշությունը էապես բարձրացնում է դիտումների պահանջարկը, մինչդեռ միայն նախախաղային հավանականություններով սահմանափակվելը կարող է թերագնահատել այդ էֆեկտը[10,13]:

Սպորտի տնտեսագիտության դաշտն ընդլայնվել է նաև դեպի կանանց սպորտի պահանջարկի մեծացմամբ: Ոլորտի վերաբերյալ 2023–2025 թթ. հաշվետվությունները և վերլուծությունները արձանագրում են հետաքրքրության, դիտումների ու հովանավորչական եկամուտների աճ, իսկ որոշ շուկաներում կանանց մրցաշարերը դիտելիությամբ գերազանցել են տղամարդկանցը[6]: Միևնույն ժամանակ հարթակների միջև վարքագիծը էականորեն տարբերվում է. ավանդական TV-ի անկումները հաճախ փոխհատուցվում են OTT/սթրիմինգային ու short-form (սոցիալական մեդիա) ներգրավմամբ, ինչը կարևորում է բաշխման ալիքների համադրումը պահանջարկի մոդելներում[9]:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ վերջին տարիների հետազոտություններում սպորտի տնտեսագիտության օրակարգը զգալիորեն ընդլայնվել է՝ դուրս գալով ավանդական թիմային մարզաձևերի շրջանակից: Այժմ այն ներառում է նոր ուղղություններ, ինչպիսիք են թվային հարթակները, սոցիալական մեդիայի վրա հիմնված երկրպագուների ներգրավվածության մեխանիզմները և մեդիահիրավունքների գլոբալացված շուկաները: Խորհրդատվական և ոլորտային հաշվետվությունները [7,11]հաստատում են, որ երկրպագուների փորձն աստիճանաբար թվայնացվում է՝ ներառելով ինտերակտիվ հոսքեր, տվյալահեն անհատականացում և Web3 տեխնոլոգիաներ (թոքեններ և այլն): Միաժամանակ, մեդիահիրավունքների շուկան ավելի ու ավելի է տեղափոխվում խոշոր տեխնոլոգիական հարթակներ, որոնք ձևավորում են նոր բիզնես մոդելներ և մրցակցային դինամիկա[7]:

Հայերեն տնտեսագիտական գրականության մեջ «Սպորտի տնտեսագիտություն» և «սպորտի տնտեսություն» եզրույթաբանական հստակ տարբերակումը դեռևս լայնորեն տարածված չէ: Հայկական աղբյուրները, այդ թվում՝ պաշտոնական փաստաթղթերը (օրինակ՝ ՀՀ կառավարության 2024–2030 թվականների ռազմավարությունը) [1,2,3] և լրատվականները, հիմնականում անդրադառնում են սպորտին որպես **ոլորտ** կամ **արդյունաբերություն** (ֆինանսավորում, կառավարում, ենթակառուցվածք), այլ ոչ թե որպես ինքնուրույն գիտական ենթաճյուղի:

Մինչդեռ, ինչպես արդեն նշեցինք, միջազգային ակադեմիական

գրականության մեջ, այս երկու հասկացությունները հստակ տարբերակվում են.

Այսպիսով՝ կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրահանգել, որ «Սպորտի տնտեսագիտությունը» տնտեսագիտության համեմատաբար նոր, բայց արագ զարգացող ենթաճյուղ է, որն ուսումնասիրում է սպորտային գործունեության հետ կապված տնտեսական երևույթները:

Սպորտի տնտեսագիտության մեջ կիրառում են միկրոտնտեսագիտության և մակրոտնտեսագիտության տարբեր տեսություններ և մոդելներ, ժամանակակից մեթոդներ, մասնավորապես խաղերի տեսությունը՝ վերլուծելու ակումբների և լիգաների ռազմավարական փոխազդեցությունները, օպտիմալացման տեսությունը՝ ռեսուրսների արդյունավետ բաշխումը հասկանալու համար, և էկոնոմետրիկ մոդելները՝ տվյալների հիման վրա տնտեսական հարաբերությունները գնահատելու համար:

Սպորտի տնտեսագիտությունը՝ տնտեսագիտության ինքնուրույն, սակայն միջդիսցիպլինար ենթաճյուղ է, որն ուսումնասիրում է սպորտի ոլորտում սահմանափակ և հազվագյուտ ռեսուրսների արտադրությունը, բաշխումը, փոխանակությունը և սպառումը՝ միկրո և մակրո մակարդակներում՝ հաշվի առնելով վարքային օրինաչափությունները և թվային տնտեսության ազդեցությունները:

Մեր կողմից ներկայացված սահմանումը կարող է դիտարկվել որպես համակարգված և արդիական մոտեցում, քանի որ այն համադրում է տարբեր հեղինակների տեսակետները՝ միաժամանակ ընդգրկելով սպորտի տնտեսագիտության դասական հիմքերը (արտադրություն, բաշխում, փոխանակում, սպառում) և նորագույն ուղղությունները (վարքային տնտեսագիտություն, թվային տնտեսություն): Այն թույլ է տալիս տեսականորեն ու մեթոդաբանական առումով ամբողջականորեն սահմանել սպորտի տնտեսագիտությունը՝ որպես տնտեսագիտության ինքնուրույն, սակայն միջդիսցիպլինար ենթաճյուղ:

Այս խորապատկերին, ավելորդ չենք համարում նշել նաև այն մեթոդաբանական հիմքերը, որոնք «Սպորտի տնտեսագիտության», որպես ենթաճյուղի ուսումնասիրության գործընթացներում խիստ կարևորվում են: Դրանցից առավել կարևորներն են ***Էկոնոմետրիկ մոդելավորումը, խաղերի տեսությունը, շուկայական վերլուծությունը, օպտիմալացման տեսությունը:***

Սպորտի տնտեսագիտության գիտական նշանակությունը.

Սպորտային տնտեսագիտության գիտական նշանակությունը բազմաշերտ է և ընդգրկում է հետևյալ հիմնական դիտանկյունները.

• **Սպորտային քաղաքականության մշակման ապացույցահեն հիմք.** Այն տրամադրում է վերլուծական գործիքներ և հետազոտական արդյունքներ՝ սպորտային քաղաքականության մշակման և բարելավման համար, ապահովելով, որ որոշումները հիմնված լինեն հստակ տնտեսական տվյալների և վերլուծությունների վրա:

• **Ռիսկերի գնահատման գործիքներ ներդրումային որոշումների համար.** Սպորտի տնտեսագիտությունը մշակում և կիրառում է մոդելներ՝ սպորտային ոլորտում ներդրումների հետ կապված ռիսկերը գնահատելու համար: Սա թույլ է տալիս ավելի տեղեկացված և արդյունավետ ներդրումային որոշումներ կայացնել:

• **Կանխատեսման մոդելներ սպորտային շուկաների զարգացման համար.** Այն մշակում է կանխատեսման մոդելներ, որոնք թույլ են տալիս գնահատել սպորտային շուկաների ապագա զարգացումները, ներառյալ եկամուտների աճը, հանդիսատեսի պահանջարկը և ֆինանսական միտումները:

• **Սպորտի հասարակական դերի սոցիալ-տնտեսական վերլուծություն.** Սպորտի տնտեսագիտությունը ուսումնասիրում է սպորտի սոցիալ-տնտեսական ազդեցությունը հասարակության վրա՝ ներառյալ առողջությունը, կրթությունը, զբոսաշրջությունը և համայնքային զարգացումը:

Սպորտի տնտեսագիտության զարգացման ապագայի ուղղությունները:

Ժամանակակից «Սպորտի տնտեսագիտությունը» զարգանում է հետևյալ ուղղություններով.

1.Բեհավորիստական տնտեսագիտության ինտեգրումը սպորտային վարքի ուսումնասիրության մեջ

Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ավելի խորությամբ հասկանալ ինչպես սպորտային ոլորտի մասնակիցների (մարզիկներ, մարզիչներ, երկրպագուներ, ակումբների ղեկավարներ, հեռարձակողներ), այնպես էլ սպորտային կազմակերպությունների որոշումների կայացման գործընթացները: Ավանդական տնտեսագիտությունը հաճախ ենթադրում է, որ անհատները ռացիոնալ են և իրենց որոշումները կայացնում են՝ առավելագույնս սեփական օգուտ ստանալու տեսանկյունից: Սակայն բեհավիորիստական տնտեսագիտությունը, հիմնվելով հոգեբանական պատկերացումների վրա, ցույց է տալիս, որ մարդկային վարքը հաճախ շեղվում է ռացիոնալությունից՝ ենթարկվե-

լով ճանաչողական կողմնակալությունների՝ զգացմունքների և սոցիալական գործոնների ազդեցությանը:

Սպորտային տնտեսագիտության մեջ այս մոտեցման կիրառումը թույլ է տալիս վերլուծել հետևյալ դիտանկյունները՝ երկրպագուների վարքը, մարզիկների և մարզիչների որոշումները, ակումբների և լիգաների կառավարման առանձնահատկությունները, սպորտային քաղաքականությունը:

Կարելի է արձանագրել, որ բեհավիորիստական տնտեսագիտության ինտեգրումը սպորտային տնտեսագիտությանը հեղափոխական է ինչպե՛ս հետազոտական, այնպե՛ս էլ գործնական առումներով: Այն ոչ միայն հարստացնում է սպորտային ոլորտի վերլուծության գործիքակազմը, այլև հնարավորություն է տալիս մշակել ավելի արդյունավետ ռազմավարություններ և քաղաքականություններ՝ հիմնված մարդկային վարքի ավելի ճշգրիտ պատկերացումների վրա: Սա ժամանակակից sports economics-ի առանցքային զարգացումներից է, որն ապահովում է ոլորտի ավելի համապարփակ և նրբերանգ ըմբռնում:

2.Մեծ տվյալների վերլուծությունը կանխատեսման ճշգրտության բարձրացման նպատակով:

Ժամանակակից աշխարհում մեծ տվյալների (Big Data) աճող ծավալները և բարդությունը ստեղծում են աննախադեպ հնարավորություններ տարբեր ոլորտներում կանխատեսման ճշգրտությունը բարձրացնելու համար: Ավանդական վերլուծական մեթոդները հաճախ անբավարար են մեծ տվյալների մարտահրավերները հաղթահարելու համար՝ պայմանավորված դրանց ծավալով, արագությամբ և բազմազանությամբ: Մեծ տվյալների վերլուծությունը սպորտի ոլորտում ևս թույլ է տալիս մշակել և վերլուծել հսկայական քանակությամբ տեղեկատվություն՝ բացահայտելով թաքնված օրինաչափություններ, միտումներ և փոխկապակցվածություններ, որոնք անհասանելի կլինեին փոքրածավալ տվյալների դեպքում:

3.Կայուն զարգացման մոդելների մշակումը սպորտային ենթակառուցվածքների համար: Սպորտային ենթակառուցվածքների կայուն զարգացման մոդելների մշակումը կենսական նշանակություն ունի ինչպես շրջակա միջավայրի պաշտպանության, այնպես էլ տնտեսական արդյունավետության և սոցիալական պատասխանատվության ապահովման համար: Այն թույլ է տալիս ստեղծել մարզական օբյեկտներ, որոնք ոչ միայն ծառայում են իրենց հիմնական նպատակին, այլև նվազագույնի են հասցնում բացասական ազդեցությունը բնության վրա և առավելագույնի են հասցնում օգուտները համայնքի համար:

4.Թվային տնտեսության ազդեցությունը սպորտային ոլորտի վրա: Թվային տնտեսությունը հեղափոխական փոփոխություններ է բերել սպորտի ոլորտում՝ վերափոխելով մարզաձևերի դիտման, կառավարման և առևտրայնացման եղանակները:

Այս փոփոխություններն ունեն ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություններ: Դրական ազդեցություններից կարևորում ենք երկրպագուների ներգրավվածության բարձրացումը, տվյալների վերլուծությունը, սպորտի կառավարման արդյունավետության բարձրացումը: Իսկ բացասական ազդեցություններից՝ անվտանգության և գաղտնիության մտահոգությունները, կախվածությունը տեխնոլոգիայից, էթիկական հարցերը և E-sports-ի ազդեցությունը ավանդական սպորտի վրա

Աներկբա է,որ թվային տնտեսությունը զգալիորեն ընդլայնել է սպորտի ոլորտի հնարավորությունները՝ արձանագրելով աննախադեպ աճ և նորարարություն:

Եզրակացություն: «Սպորտի տնտեսագիտություն»/«սպորտի տնտեսություն» եզրույթների անսահմանազատ գործածությունը ծնում է մեթոդաբանական անորոշություններ և գիտական վավերականության խնդիրներ: Անհրաժեշտ է եզրույթաբանական խիստ ստանդարտացում՝ ապահովելու հետազոտությունների համադրելիությունը և քաղաքականության վերլուծությունների կոռեկտությունը:Ի տարբերություն տնտեսագիտության ավանդական ճյուղերի, սպորտի տնտեսագիտությունը հաճախ հաշվի է առնում այնպիսի ոչ ֆինանսական դրդապատճառներ, ինչպիսիք են սպորտային փառքը, երկրպագուների հավատարմությունը և սպորտային հաջողության սոցիալական արժեքը: Այս առանձնահատկությունները սպորտի տնտեսագիտությունը դարձնում են եզակի և հետաքրքիր ուսումնասիրության ոլորտ: Սույն հետազոտությունն ապացուցում է, որ «Սպորտի տնտեսագիտություն» եզրույթը պետք է սահմանվի որպես տնտեսագիտության ինքնուրույն, բայց միջդիսցիպլինար ենթաճյուղ, որն ուսումնասիրում է սպորտային գործունեության հետ կապված տնտեսական երևույթները՝ կիրառելով միկրո- և մակրոտնտեսական, էկոնոմետրիկ և խաղային-տեսական մեթոդներ, հաշվի առնելով վարքային օրինաչափությունները, թվայնացման ազդեցությունները և կայունության պահանջները:

🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ կառավարություն. (07.12.2023). *«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների 2024–2030 թվականների զարգացման ռազմավարությունը» և «Գործողությունների պլան» (N 2145-Լ).* ARLIS իրավ. Sh. https://www.arlis.am/hy/acts/186978? utm_source=chatgpt.com, [մուտք՝ 01.08.2025]

2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն. (09.01.2025). *ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման 2025 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին* (նախարարի հրաման, 19-Ա/…)., https://escs.am/files/files/2025-01-10/e880b6de7fac21cb1aabc4b624bdf1c9.pdf, [մուտք՝ 01.08.2025]

3. Հայաստանի Հանրապետության օրենք «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» (վերջին խմբ.): ARLIS, https://www.arlis.am/hy/acts/142597, [մուտք՝ 01.08.2025]

4. Andreff, W. (2009, May 27–29). *À quoi sert l'économie du sport?* Paper presented at the 5e Congrès international de la Société de Sociologie du Sport de Langue Française: «À quoi servent les sciences sociales du sport? Recherches et utilité(s) sociale(s)», CRIS, Université Claude Bernard – Lyon 1, France. Available at: p.1-2

https://shs.hal.science/halshs-00634927v1/document, , [մուտք՝ 06.08.2025]

5. Blair, R. D. (2011). *Sports economics*. Cambridge University Press, https://books.google.am/books?id=aUED8SK8_qAC&printsec=frontcover&hl=hy#v=onepage&q&f=false, [մուտք՝ 06.08.2025]

6. Business Insider. (2024, April 8). *NCAA women's basketball TV ratings and popularity surge, with stars like Caitlin Clark driving interest.* https://edition.cnn.com/2024/04/10/us/ncaa-womens-basketball-ratings-dg

[մուտք՝ 10.08.2025]

7. Deloitte. (2024). *2024 Sports Industry Outlook.*

https://www.deloitte.com/ug/en/Industries/tmt/perspectives/sports-industry-outlook.html,

[մուտք՝ 10.08.2025]

8. Fort, R. D. (2011). *Sports Economics* (3rd ed.). Prentice Hall. (Preview: Google Books)., https://books.google.am/books/about/Sports_Economics.html?id=itTtAAAAMAAJ&redir_esc=y, [մուտք՝ 09.08.2025]

9. The Guardian. (2025, June 26). *Mainstream TV audiences for Women's Super League dropped 35% last season*. https://www.theguardian.com/ football/2025/jun/26/ mainstream-tv-audiences-for-womens-super-league-dropped-35-last-season, [մուտք՝ 10.08.2025]

10.Maxcy, J. G. (2024). *Sport Economics Research: New Perspectives on the Demand for Sport*. **Digest of Sport Management**, 4, 1–12

https://digestsm.com/upload/iblock/c69/p1yt59p4nl0ddpk1clp610q4kxuyjkeq/4_Joel_G.Maxcy_2024.pdf, [մուտք՝ 10.08.2025]

11. Michael A. Leeds, Peter von Allmen, Victor A. Matheson, Economics and Sports,7th Edition, 2022, https://www.routledge.com/The-Economics-of-Sports/ Leeds-Matheson-von-Allmen/p/book/9781032330037, , [մուտք՝ 11.08.2025]

12. PwC. (2023). *Sports Survey 2023*. https://www.pwc.ch/en/publications/ 2023/PwCs-Global-Sports-Survey-7th-Edition-CH.pdf [մուտք՝ 10.08.2025]

13.Solow, J. L., Reilly, P., & von Allmen, P. (2024). *Within-game uncertainty of outcome and the demand for professional basketball on television*. **Sports Economics Review**, 8, 100044. https://doi.org/10.1016/j.spoecon.2024.100044, [մուտք՝ 10.08.2025]

ON THE INTERPRETATION OF THE TERM "SPORT ECONOMICS"

J.A. Tadevosyan
Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia

ABSTRACT

Keywords: sport economics, terminological ambiguities, interdisciplinary field, microeconomics, macroeconomics, behavioral economics, big data, digital economy.

Research Relevance. In today's global economy, the study of sport economics is increasingly important due to the growing role of sport. Despite terminological ambiguities, applying economic principles and analytical tools is essential for understanding resource allocation, decision-making, and the influence of markets and public policies. A systematic and academic definition of the field is thus a necessary condition for the advancement of economic thought.

Research Aim: The aim of this study is to substantiate the hypothesis that sport economics is an independent subfield of economic science with a distinct place in the system of disciplines.

Research Objectives: to analyze and clarify terminological confusions and semantic ambiguities concerning the concept of sports economics; to propose a new definition; and to formulate directions for future development of the field.

Research Methods and Organization. The study employed theoretical and comparative analysis, examining definitions of "sport economics" and distinguishing it from "the sport economy" (the aggregate sector). A new definition is proposed, methodological foundations outlined, and prospects for further development discussed.

Research result analysis: Literature review shows that confusion arises from the interdisciplinary and evolving nature of the field. Scholars clearly differentiate between *sports economics* as an analytical discipline and *the sports economy* as the sector. Sports economics is identified as a rapidly developing subfield that analyzes economic phenomena of sport using micro- and macroeconomic tools, including production, distribution, and consumption of resources, while accounting for behavioral patterns and the digital economy.

Conclusion: Sports economics is an independent yet interdisciplinary subfield of economics. Its methodological foundations include econometric modeling, game theory, and market analysis. The field provides evidence and forecasting models for policy and investment decisions. Future progress will be driven by behavioral economics, big-data analytics, and research on digital transformations.

О ТОЛКОВАНИИ ТЕРМИНА «ЭКОНОМИКА СПОРТА»

Дж. А. Тадевосян,
Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: экономика спорта, терминологические разночтения, междисциплинарная область, микроэкономика, макроэкономика, поведенческая экономика, большие данные, цифровая экономика.

Актуальность исследования. В условиях глобальной экономики изучение экономики спорта приобретает особую значимость благодаря растущей роли

спорта. Несмотря на терминологические неоднозначности, применение экономических принципов и аналитических инструментов необходимо для понимания распределения ресурсов, процессов принятия решений и влияния рынков и государственной политики. Систематическое и академическое определение области является важным условием развития экономической мысли.

Цель и задачи исследования. Цель — подтвердить гипотезу о том, что экономика спорта является самостоятельной подотраслью экономической науки и занимает особое место в системе дисциплин. Задачи: проанализировать и прояснить терминологические путаницы и смысловые неопределенности, связанные с трактовкой термина *«экономика спорта»*; предложить новое определение; сформулировать направления дальнейшего развития области.

Методы и организация исследования. Использованы теоретический и сравнительный анализ. Рассмотрены различные трактовки «экономики спорта» и её отличие от «спортивной экономики» как совокупного сектора. Предложено новое определение, обозначены методологические основы и перспективы развития.

Анализ результатов исследования. Обзор литературы показывает, что терминологическая путаница связана с междисциплинарным и динамичным характером области. Учёные различают *экономику спорта* как аналитическую дисциплину и *спортивную экономику* как отрасль. Экономика спорта определяется как быстро развивающаяся подотрасль, исследующая производство, распределение и потребление ресурсов с использованием микро- и макроэкономических инструментов, учитывающая поведенческие закономерности и влияние цифровой экономики.

Краткие выводы. Экономика спорта — самостоятельная, но междисциплинарная подотрасль экономической науки. Её методология включает эконометрическое моделирование, теорию игр и анализ рынков. Научная значимость заключается в формировании доказательной базы и прогнозных моделей для спортивной политики и инвестиций. Будущее развитие связано с интеграцией поведенческой экономики, анализа больших данных и цифровых трансформаций.

Տեղեկություններ հեղինակի մասին

Ջուլիետա Արամայիսի Թադևոսյան՝ տ.գ.թ., Սպորտի կառավարման և մարզական լրագրության ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,

E.mail: julieta.tadevosyan@sportedu.am

Information about the author

Julietta Aramayis Tadevosyan, PhD in Economics (Candidate of Sciences), Associate Professor, Head of the Department of Sports Management and Sports Journalism, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia,

E.mail: julieta.tadevosyan@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 14.08.2025–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 15.08.2025–ին:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ա. Չատինյան